

Հետազոտական աշխատանք

<p>Կազմակերպության տվյալներ</p> <ul style="list-style-type: none"> • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս 	<p>«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908</p>
<p>Հետազոտության թեմա/վերնագիր</p> <ul style="list-style-type: none"> • Հետազոտության թեմա 	<p>Համակարգչային տեխնոլոգիաների կիրառությունը Կենսաբանության դասընթացում</p>
<p>Ուսուցչի տվյալներ</p> <ul style="list-style-type: none"> • Անուն, ազգանուն, հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ 	<p>Լիլիթ Միշայի Աղաբաբյան Ուսուցչուհի 077544074 aghababyalilit@gmail.com Կենսաբանություն 7,8,9</p>
<p>Ուսումնական հաստատության տվյալներ</p> <ul style="list-style-type: none"> • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե 	<p>Ֆ. Վանաձորի Պ. Տիշինայի անվան թիվ 20 հիմնական դպրոց, Մյասնիկյան 7ա +32240074 vanadzor20@schools.am</p>

Բովանդակություն

Ներածություն	3
Հիմնական բովանդակություն	4
Եզրակացություններ, առաջարկություններ	5
Օգտագործված գրականության ցանկ	6
Հավելվածներ	7

1 էջ

Ներածություն

<p>Նպատակը եւ հետազոտական հարցը</p>	<p>Նպատակն է՝ կենսաբանության ուսուցման գործընթացում աշակերտների շրջանում առարկայի հանդեպ հետաքրքրության բարձրացման և նրանց կողմից ուսուցանվող նյութի առավել արդյունավետ յուրացման նպատակով մեթոդի՝ համակարգչային տեխնոլոգիաների կիրառմանը վերաբերող հարցեր:</p>
<p>Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը</p>	<p>Ինֆորմացիոն և սոցիալական կարողունակություն</p>
<p>Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/</p>	<p>8-րդ դասարան 24 աշակերտ</p>
<p>Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)</p>	<p>«ԴԻՏԱՐԿՈՒՄ» մեթոդը «ԴԵՊԻՆՏՆԱՍԻՐՈՒՄ» մեթոդի հետ համատեղ: google forms գործիքը, անհատական հարցումներ հարցաթերթիկով՝ ֆանկական հետազոտություն</p>

Ջեոագոտոլթյան իրականացման ժամանակահատվածը	2.09. 23 15.0 9.23

1-2 էջ

Հիմնական բովանդակություն

<p>Գրականության ակնարկ</p> <ul style="list-style-type: none"> • Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, • Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: <p><u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u></p>	<p>Նշված նպատակներից յուրաքանչյուրի լուծման համար կարելի հնարավորինս արդյունավետորեն օգտագործել տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները: Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնական կրթական արժեքն այն է, որ ինչպես առաջերս, այնպես էլ ուսուցչի համար հնարավորություն է տալիս ունենալու ուսուցման լայն ինտերակտիվ միջավայր՝ գրեթե անասհմանապակ հնարավորություններով: Տեխնոլոգիաների միջոցով հնարավոր է վերացնել այն խոչընդոտները, որոնց հանդիպում են առաջնորդներն ու ուսուցիչներն ամբողջ աշխարհում: Հզոր ծրագրերն ու համացանցը փոխում են գիտելիքներ ձեռք բերելու մեր ուղիներն ու հնարավորությունները: Դասավանդման և ուսուցման նորարարական եղանակները վերափոխում են նաև դասարանում դաս անցկացնելու գործելակերպը: Ավելին՝ տեխնոլոգիաներն ուսանողներին նոր պահանջներ են ներկայացնում. հիմնական կարողություններից բացի՝ նրանք պետք է ունենան 21-րդ դարում պահանջվող բոլոր հմտությունները՝ համագործակցության, հաղորդակցման և տեղեկատվական կառավարման կարողությունների, ինչպես նաև նրանց համար պետք է հասանելի լինեն ուսմանն օժանդակող այն բոլոր միջոցները, որոնք հնարավոր են դարձնում այդ կարողությունների օգտագործումը [2</p>
<p>Հետազոտության ընթացքը</p>	<p>Համաժխտարհային արդի գարգացումները, գիտատեխնիկական առաջընթացի աննախադեպ արագությունը, հասարակական կյանքում տեղի ունեցող վերափոխումները նպաստում են հանրակրթության դերի</p>

անին և դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի արմատական բարեփոխումներին, որոնք ժամանակի հրամայականն են դարձել:

Հանրակրթությունը հասարակական կյանքի սոցիալական ոլորտի կարևորագույն ենթահամակարգերից մեկն է, որի կազմակերպման արդյունավետ ձևերից ու զարգացման մակարդակից մեծապես կախված է հասարակության հուսալի ապագան: Հասարակության զարգացման արդի միտումները կանխատեսում են, որ ապագայում սոցիալ-ֆազական ու տնտեսական ոլորտները կունենան տեխնոլոգիական բարձր հազեցվածություն: Դա հավասարապես վերաբերում է նաև հանրակրթական ոլորտին: Կրթական բարեփոխումների արդի փուլում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումն ուսուցման արդյունավետության բարձրացման պայմաններից մեկն է: Ուստի կարծում ենք, որ ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթության բնագավառում մեծապես կնպաստի կրթության ապահովմանը: Հանրակրթության արդի համակարգը անհնարին է պատկերացնել առանց տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների: Խնդիրը միայն ուսումնական գործընթացի տեխնիկական միջոցներով ապահովմանը և դրանց օգտագործման եղանակների պարզ ուսուցմանը չի վերաբերում: Անհրաժեշտ է նաև դասալրացեսում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմանը ուղղված մեթոդական աջակցության ցուցաբերում: Ուսուցչի համար այն պետք է ծառայի որպես արդյունավետ միջոց դասալրացեսի

ակտիվացման, դասի նախապատրաստման, ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման համար:

Հանրակրթական դպրոցում «Կենսաբանություն» առարկայի ուսուցումը՝ որպես միջնակարգ կրթության պարտադիր բաղադրիչներից մեկը, նպատակ է հետապնդում ապահովել բնության և կենդանի օրգանիզմների մասին սովորողների գիտելիքների ձեռքբերումը, դրանց հանաչողության մեթոդների տիրապետումը, հմտությունների և կարողությունների, ինչպես նաև արժեքային համակարգի ձևավորումը:

Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթական ծրագրերի կենտրոնի կողմից մշակված հանրակրթական հիմնական դպրոցի «Կենսաբանություն» առարկայի չափորոշիչների՝ կենսաբանության դասընթացի նպատակն է կենսաբանական և էկոլոգիական գրագիտությամբ օժտված անձի դաստիարակումը, ով կգիտակցի կյանքի՝ որպես Երկրի վրա բարձրագույն արժեքի նշանակությունը և կկարողանա բնության հետ իր հարաբերությունները կառուցել կյանքի, մարդու և Երջակա միջավայրի նկատմամբ հարգանքի հիման վրա և կլինի հասարակության և ինքն իր հետ ներգաճակ:

Հիմնական դպրոցում կենսաբանության ուսուցումը պետք է ապահովի կյանքի հիմնական հատկությունների, կազմավորվածության տարբեր մակարդակների վրա կենդանի նյութի կառուցվածքա-գործառական հիմնական դրսևորումների, օրգանիզմների բազմազանության, մարդու՝ որպես կենսաբանական և սոցիալական էակի, օրգանական աշխարհի պատմական զարգացման հիմնական ուղիների, կենդանի օրգանիզմների և միջավայրի միջև

փոխադրեցությունների, բնական համակեցությունների, բնության վրա մարդու ազդեցության վերաբերյալ գիտելիքների ձեռքբերումը, մարդու հիգիենիկ դաստիարակությունը՝ առողջ կենսակերպի ձևավորման, մարդու ֆիզիկական, հոգեկան և բարոյական առողջության ապահովման նպատակներով: Հիմնական դպրոցում սովորող պետք է կարողանա՝

1. բնության մեջ և լաբորատոր պայմաններում դիտարկել, նկարագրել, համեմատել, համադրել բնական օբյեկտները և եզրահանգումներ կատարել.

2. պլանավորել և իրականացնել փորձեր, գրանցել կատարած դիտարկումները, դրանք համակարգել ալյուսակների, գրաֆիկների, գծապատկերների տեսքով, մեկնաբանել ստացված արդյունքները.

3. գիտակցել տարբեր բնույթի և ընդգրկման՝ տեղային, տարածաշրջանային և աշխարհային, էկոլոգիական հիմնախնդիրների կարևորությունը և տեսնել դրանց օրինակներ Հայաստանում:

Նա պետք է կարողանա՝

1. կարծիք հայտնել բնության այս կամ այն երևույթի մասին, իր կարծիքը փաստերով հիմնավորել.

2. օգտվել բնագիտական ժամանակակից հիմնախնդիրների վերաբերյալ գիտահանրամատչելի գրականությունից և տեղեկատվական տեխնոլոգիաներից.

3. խմբում աշխատել և համագործակցել, դրսևորել հանդուրժողականություն, հաշվի առնել աշխարհային կարծիքները.

4. պահպանել առողջ ապրելակերպի նորմերը, օրվա ռեժիմը և սննդի հիգիենան, հոգ տանել սեփական առողջության մասին.



ԱՇակերտների

տարիփային

առանձնահատկություններից, ինչպես նաև դասի թեմայից էլնելով՝ կենսաբանության դասաժամերին կարելի է ուսուցման գործընթացը կազմակերպել տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների հետևյալ միջոցների օգտագործմամբ՝ սահացուցադրումներ, համակարգչային ներկայացումներ, ինտերակտիվ գրատախտակներ, համակարգչային ուսուցողական խաղեր, համակարգչային թեստեր, էլեկտրոնային գրադարաններ, դպրոցական և տեղեկատվական համակարգեր:

Քանի որ ուսուցանվող յուրաքանչյուր դասանյութ կամ թեմա պահանջում է համապատասխան ծրագրային միջոցներ, ապա դրանք կազմելիս պետք է առաջնորդվել հետևյալ դրույթներով.

- նոր նյութը յուրացնելիս պետք է օգտագործել ցուցադրական ծրագիր, որը աշակերտներին ավելի պարզ ու հստակ կներկայացնի թեման և այն կդարձնի ավելի դյուրըմբռնելի.

- նյութի ամրապնդման դասերին նպատակահարմար է օգտագործել վերահսկող ծրագրեր, որտեղ մասնակիցները ցուցադրում են ստացված գիտելիքները և նյութը ներկայացնելու անհրաժեշտ հմտությունները,

- գործնական պարապմունքներին կարելի է օգտագործել ուսուցչի կողմից նախապես պատրաստված սլայդներ, լուսանկարներ կարճ տեսանյութեր և այլն [3]:

Վերջին մեկ տարվա ընթացքում մեր կողմից տարբեր դասարաններում կենսաբանության դասերին բազմիցս կազմակերպվել են դասեր՝ համակարգչային

տեխնոլոգիաների կիրառմամբ: Մասնավորապես՝ ութերորդ դասարանում «Սրտի կառուցվածքը և աշխատանքը» թեմայի շրջանակներում աշակերտները հնարավորություն ունեցան տեսնելու մարդու սրտի աշխատանքի եռաչափ 3D մոդելը՝ պարզ կերպով տեսնելով սրտի կառուցվածքը, փոքրիկների կծկումները, արյունատար անոթներով արյան հոսքը և մնացած այլ մանրամասներ: Իններորդ դասարանում նմանատիպ դաս ենք անցկացրել «Բջջի կառուցվածքը և ֆունկցիան» թեմայով, որի ժամանակ էկրանի վրա աշակերտները հնարավորություն ունեցան տեսնելու բջջի կառուցվածքը՝ օրգանոթների դասավորվածությունն ու շարժումը: Վերջինս, ի դեպ, հնարավոր է տեսնել միայն էլեկտրոնային մանրադիտակով, ինչը, իհարկե, դպրոցի պայմաններում հնարավոր չէ: Յոթերորդ դասարանում կենդանաբանության դասընթացում համակարգչային տեխնոլոգիաների կիրառմամբ կատարել են բազմաթիվ լաբորատոր և գործնական աշխատանքներ՝ մի շարք կենդանիների արտաքին կառուցվածքի ուսումնասիրություններ, նրանց պահվածքի դիտարկում՝ սովորական և անսովոր պայմաններում, և այլն:

Վերոնշյալ դասերի արդյունավետության մասին կարելի է դատել աշակերտների ցուցաբերած ակտիվությունից, դասապրոցեսին նրանց մասնակցության, ինչպես նաև նյութի յուրացման աստիճանից, աշխատելու և հանձնարարված տնային աշխատանքի շուրջ ինֆորմացիոն լրացուցիչ նյութեր, սլայդներ պատրաստելու ցանկությունից, մի բան, որին վերջին տարիներին գնալով ավելի ու ավելի հազվադեպ էինք ականատես լինում:

Ուսուցման գործընթացում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը, փոփոխելով դասավանդման և ուսուցման ավանդական մեթոդները, ուսուցչին հնարավորություն է ընձեռում կիրառել նաև «տեղեկատվական դարին» համահունչ նոր մեթոդներ՝ արդյունավետ ուսուցում կազմակերպելու նպատակով [2]: Ակնհայտ է, որ դրանց կիրառմամբ դասադասարանում տնտեսում ենք ժամանակը, պահպանում աշակերտների կարգապահությունը, ակտիվացնում նրանց, առաջացնում հետաքրքրություն առարկայի նկատմամբ և նպաստում աշակերտ-ուսուցչի փոխհամագործակցությանը, ինչպես նաև բարձրացնում ուսումնական գործընթացի արդիականությունն ու արդյունավետությունը:

Ուսումնական կարողությունների զարգացումը և աշակերտների ստեղծագործական ակտիվությունը դասերին ուղղակիորեն կապված են համակարգչային տեխնոլոգիաների գործածումից և առարկայի նպատակային դասավանդումից:

Ընդհանրացնելով վերոգրյալը՝ կարող ենք ասել, որ, կիրառելով տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ, ուսուցիչը.

- հոգեբանորեն նպաստում է աշակերտների կողմից նյութի յուրացման գործընթացին և բարձրացնում դասի արդյունավետությունը, բարձրացնում է աշակերտների ուսումնական ակտիվությունը.
- առաջացնում է հետաքրքրություն առարկայի նկատմամբ.
- նպաստում է տարածական աշխարհայացքի ձևավորմանը.

	<ul style="list-style-type: none"> • արժևորում է աշխարհագրության կիրառական նշանակությունը. • նպաստում է դասանյութի դյուրին ընկալմանը. • մեծացնում է առարկան ուսումնասիրելու ցանկությունը. • նպաստում է տեսական նյութի ավելի ամբողջական յուրացմանը. • սովորողներին հնարավորություն է տալիս ինֆնուրոյն ձեռք բերել տեղեկություններ և դրանք մշակել համակարգչային տեխնոլոգիաների օգտագործմամբ. • աշակերտների մոտ ձևավորում է սեփական տեսակետը հստակ ու պարզ արտահայտելու կարողություն: <p>Այս հիմնահարցերի նպատակային լուծումը ենթադրում է մեթոդական նոր ցուցումներ ու ծրագրեր, որոնք աշակերտների մոտ կապահովեն անցում վերարտադրողական մտածողությունից ստեղծագործականի, կձևավորեն կառուցողական մտածելակերպ, տեղեկատվական մշակույթ և այն արժևորելու ունակություն:</p>

Մոտավոր 10 էջ

Եզրակացություններ, առաջարկություններ

<p>Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին</p>	<p>Այս հիմնահարցերի նպատակային լուծումը ենթադրում է մեթոդական նոր ցուցումներ ու ծրագրեր, որոնք աշակերտների մոտ կապահովեն անցում վերարտադրողական մտածողությունից ստեղծագործականի, կձևավորեն կառուցողական մտածելակերպ, տեղեկատվական մշակույթ և այն արժևորելու ունակություն:</p>
<p>Այլ տեղեկատվություն</p>	<p>Աշխատանքում դիտարկվում են կենսաբանության ուսուցման գործընթացում աշակերտների շրջանում առարկայի հանդեպ հետաքրքրության բարձրացման և նրանց կողմից ուսուցանվող նյութի առավել արդյունավետ յուրացման նորագույն մեթոդի՝ համակարգչային տեխնոլոգիաների կիրառմանը վերաբերող հարցեր:</p>

Օգտագործված գրականության ցանկ

1. Հանրակրթական հիմնական դպրոցի «Կենսաբանություն» առարկայի չափորոշիչ և ծրագիր, Երևան, 2012թ.:
2. «101 գաղափար նորարարական մեթոդներ կիրառող ուսուցիչների համար»՝Ադամ Մերենյիկ, Վինցե Սաբոի, Արիլլա Տակաչի խմբագրությամբ, Բուդապեշտ, 2006թ.:
3. Слюсарь Т.Д. , Применение компьютерных технологий на уроках биологии,
4. Захода Н.В.,Использование компьютерных технологий на уроках биологии для активизации учебной деятельности школьников,

Հավելվածներ

Հաշվետվության կցված սյուրթեր

- Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ)
- Նկարներ
- Արդյունքներ

Ընդգրկված չեն հիմնական էջերի մեջ